

**«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՈԱԴԻՈԿԱՅԱՆԻ 20.04.2012 Թ.
«ԾԱՌՈՒԿՅԱՆՆ ԱՌԱՅԺՄ ՔԱՐՈՂԱՐՇՇԱՎՈՒՄ ԳՈՒՄԱՐ ԶԻ՝ ԾԱԽՍԵԼ»
ՆՅՈՒԹԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Տեղեկացնում ենք, որ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ նյութը թերի է, ոչ ամբողջական և չի արտացոլում իրական պատկերը, ինչը ներկայացված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից կազմված տեղեկանքում: Մասնավորապես՝ լրագրողը, հղում կատարելով ծառայության տեղեկանքին, նշել է, որ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ Արտակ Սարգսյանի, Սամվել Ալեքսանյանի, Սարիբեկ Սուքիասյանի, Մուրադ Գուլյանի և Գագիկ Ծառուկյանի նախընտրական հիմնադրամներ համապատասխանաբար կատարվել են 1.960.000, 2.577.010, 5.000.000, 800.000, 1.000.000 դրամի մուտքեր, և նրանցից ոչ մեկը չի կատարել քարոզչական ծախսեր, մինչդեռ համապատասխան ընտրատարածքներում տեղադրված են նրանց մեծադիր քարոզչական պաստառները:

Հարկ է նշել, որ ծառայության կողմից կազմված տեղեկանքի վերջին սյունակը վերնագրված է <<ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հետ կապված, դեռ չվաճարված դրամական պարտավորությունների չափը>>, որտեղ ամրագրված են թեկնածուներից յուրաքանչյուրի՝ ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հետ կապված, դեռ չվաճարված դրամական պարտավորությունների չափը: Արտակ Սարգսյանի դեպքում այն կազմում է 2.573.523, Սամվել Ալեքսանյանի դեպքում՝ 2.148.403, Սարիբեկ Սուքիասյանի դեպքում՝ 959.100, Մուրադ Գուլյանի դեպքում՝ 674.400, և Գագիկ Ծառուկյանի դեպքում՝ 1.021.200 դրամ: Վերոգրյալից պետք է ենթադրել, որ թեև թեկնածուները իրենց նախընտրական հիմնադրամներից դեռևս փաստացի ծախսեր չեն կատարել, բայց համապատասխան քաղաքացիաիրավական գործարքների արդյունքում ձեռք են բերել ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ապրանքներ և ծառայություններ, որոնց գինը՝

շուկայական արժեքով, ամրագրել են իրանց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի <<ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հետ կապված, դեռ չվաճարված դրամական պարտավորությունների չափը>> սյունակում: Այդ պայմանագրային պարտավորությունները նրանք կարող են կատարել պայմանագրով նախատեսված ժամկետում՝ մինչև քվեարկության օրը: Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն թեկնածուները կենտրոնական ընտրական հանձնաժողովի թույլտվությունը ստանալուց հետո իրենց հիմնադրամներից վճարումներ կարող են կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

Հայաստանի Հանրապետության

Կենտրոնական ընտրական հանձնաժողով